Փոքր Մանթաշ

Վարչական ղեկավար՝ Ժիրայր Հակոբյան
Հեռ: 093 39 72 48
Մակերես՝ 8,9կմ^2
Բնակչություն՝ 2300
Ինդեքս՝ 3027
sargsjan.ashxen@mail.ru

Փոքր Մանթաշը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 8,7 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրիից՝ 28 կմ հարավ-արևելք: Փոքր Մանթաշը հիմնադրվել է հին գյուղի տեղում: Նախկինում ունեցել է Այլուր Փոքր, Արըխվալի Փոքր, Արըխվելի Փոքր, Արիխվալի Երկրորդ, Մանթաշ անվանումները: Փոքր Մանթաշ է վերանվանվել 1935 թ-ին:

Փոքր Մանթաշը գտնվում է Մանթաշ գետի ձախափնյա սարավանդում՝ ծովի մակարդակից 1960մ բարձրության վրա: Կիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ:

Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Որպես խմելու ջուր օգտագործվում է Մանթաշ գետի ջրերը: Գյուղի տարածքում կա հանքային աղբյուր: Ունի 1864 թ-ին կառուցված ս. Աստվածածին եկեղեցին: Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-30թթ գաղթել է Արևմտյան Հայաստանի Կարսի, Մուշի և Խնուսի գավառներից: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 178հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր՝ կազմելով 415հա:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Փոքր Մանթաշն ունի 1864 թ.-ի մատուռ: